

**«ՄԱԶՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ  
2008Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ 2009**

## Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1) թողարկողի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը,

Ընկերության գործունեության հիմնական տեսակը Ֆերոնոլիբդենի, մաքուր մոլիբդենի ջարդենի և կալիումի պերոննատի արտադրությունն է: Արտադրության հումքը Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական այնպես էլ արտասահմանյան ընկերություններից, համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

- «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոնքինատ» ՓԲԸ (ՀՀ) - Մոլիբդենի խտանյութի առք
- «ՆՕԱԷ Ի Լ» ՎՊԸ (ՌԴ) - Ալյումինի փոշու գնում
- «Վ. Մինասյան» Տրեյդինգ կոմպանի (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
- «Մոլիբդեն Մոբարկի Զուվհանի» (Իրան) - Մոլիբդենի նախապես մշակված կոնցենտրատի գնում
- ՄԻ «ԺՕՈ՛ձՁՁՁ» (Վրաստան) - Ֆերոսիլիցիումի գնում
- “Maximex” LLP (Անգլիա) - Խողովակների գնում
- “xàéíà ýíä Êíðäý äðóí èèìèðáä” (Նոր Չեխանդիա) - Մոլիբդենի կոնցենտրատի գնում
- “Ěííáðäáí Ěíðáð Ěíæáňð Ěíé” (Բրիտանական Վիրջինյան կղզիներ) - Տեխնիկական մոլիբդենի դիսուլֆիտի գնում
- “BRUNLOW LIMITED INC” (ԱՄՆ) - Ալյումինի փոշու գնում
- ՄԻ «ԺՕՈ՛ձĚĚĚĚ» (Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
- “Óáððíððáéä” (Ուկրաինա) - Ալյումինի փոշու գնում


Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես մախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2008թ.-ին ընկերության արտադրության ծավալը կազմել է 41 366 549.3 հազ. ՀՀ դրամ կամ 135 206.9 հազ ԱՄՆ դոլար (1\$ = 305.95 դրամ) (տես Աղյուսակ 1 և Գծապատկեր 1).

Աղյուսակ 1

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2008թ.**

Արտադրվել է	2008թ. նկարագրությունը	
	Հազ. դրամ	Հազ. \$
Ֆերոնոլիբդեն	35 055 395.9	114 578.8
մաքուր մոլիբդենի ջարդոն	6 252 628.9	20 436.8
Կալիումի պերոննատ	58 524.5	191.3
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>41 366 549.3</b>	<b>135 206.9</b>



Գծապատկեր 1

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2008թ. (տոննա)**

2008թ.-ին Ընկերության ամբողջ արտադրանքը արտահանվել է: Սպառող հիմնական Ընկերությունները են.


- “CRONIMET MINING GmbH” (Գերմանիա)
- “MIDAS METALS INTERNATIONAL” LLC (Արաբական Միացիալ Էմիրություններ)
- “CLIPFORD TECHNOLOGY LIMITED” (Անգլիա)
- «Սիդմետ ՍԱ» (Բելգիա)

Իրացումը 2008թ.-ին կազմել է 35 644 389.0 հազ. դրամ կամ 116 503.9 հազ. \$ (տես Աղյուսակ 2 և Գծապատկեր 2).

Աղյուսակ 2

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2008թ.**

Իրացվել է	2008թ. նկարագրությունը	
	Հազ. դրամ	Հազ. \$
Ֆերոնոլիդեն	30 112 773.2	98 423.8
մաքուր նոլիդենի ջարդոն	5 510 934.2	18 012.5
Կալիումի պերոնատ	20 681.6	67.6
<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>	<b>35 644 389.0</b>	<b>116 503.9</b>



Գծապատկեր 2

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը (տոննա)**

## ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2008թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	31 431 681
Իրացման ծախսեր	3 762
Վարչական ծախսեր	486 905
Գործառնական գործունեությունից շահույթ	3 722 041
Այլ գործառնություններից շահույթ	2
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	4 269 004
Այդ թվում	
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում ներդրումից շահաբաժին	3 750 000
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	89 415
Ավանդի %	461 180
2008թ. շահույթ	7 991 047
Շահութահարկ	848 075
2008թ. զուտ շահույթ	7 142 972
Հիմնական միջոցները 01.01.2008թ.	1 916 913.0
Հիմնական միջոցները 2008թ.-ին ավելացել են	446 615.0
Հիմնական միջոցները 01.01.09թ.	2 363 528.0
Կանոնադրական կապիտալը	690 930.0
Դեբիտորական պարտք	8 724 083.0
Կրեդիտորական պարտք	4 384 550.0

## Հատկացումները բյուջեին հարկերի գծով

Անվանումը	Հազ. դրամ
Շահութահարկ	848 075.0
Եկամտահարկ	135 038.7
Գույքահարկ	3 072.0
Հողի հարկ	343.0
Հողի վարձավճար	60.0
Բնապահպանական վճարներ	18 252.0
Կենսաթոշակային ֆոնդ	166 924.0

Բյուջեի պարտքը Ընկերությանը 01.01.2009թ. կազմել է 3 742 527.0 հազ. դրամ

Ընկերության պարտքը բյուջեին 4 905.0 հազ. դրամ:

## ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	01.01.2009 թ.
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	103 381.992
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	0.239
Ակտիվների շահութաբերություն (ROA)	0.218
Չուտ շահույթի մարժա (NPM)	0.200
Կապիտալի համարժեքության գործակից	0.880
Ֆինանսական կախվածության գործակից	0.137
Բացարձակ իրացվելության գործակից	2.328
Ընթացիկ իրացվելության գործակից	4.318
Ընդհանուր իրացվելության գործակից	4.950
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	69.918
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	5.220
Պաշարների շրջանառելիության գործակից	12.710
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	28.718
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	10.800
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	33.798

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից է օրինակ մետաղների միջազգային գների փոփոխությունը, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության արտադրանքի գնի վրա: Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Քանի որ Ընկերության մի շարք պայմանագրեր գնանշված են արտարժույթով, այդ արտարժույթների փոխարժեքների կտրուկ տատանումները էական ազդեցություն կունենան Ընկերության որոշ հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա:

2008թ.-ին միջազգային շուկայում մետաղների գները կտրուկ նվազեցին, որի արդյունքում Ընկերությունը տուժեց 4 796 557.5 մլն.-ով: Կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ արդեն նկատվում է, որ ֆերոնոլիթի պահանջարկը էականորեն նվազում է, որը կհանգեցնի Ընկերության հասույթի նվազման, չնայած դրան սպասվում է մաս մոլիբդենի պահանջարկի մոտ 50%-ի աճ, որը սակայն չի կարող լրացնել այն վնասը, որը կառաջանա ֆերոնոլիթի պահանջարկի նվազման արդյունքում:

**2) այն կարևոր ռեպերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր ռեպերը բոլոր այն ռեպերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ ռեպերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս.**

2008թ.-ին Ընկերությունը ունեցեցել է 7 142 972 հազար դրամ գուտ շահույթ: 03.04.2009թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից որոշվել է մեկ սովորական անվանական բաժնետոմսի դիմաց վճարել 25 000 ՀՀ դրամ շահութաբաժին: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությունը 2007թ.-ի համար վճարել է 40 000 ՀՀ դրամ շահութաբաժին իսկ 2006թ.-ի համար՝ 40 000 ՀՀ դրամ շահութաբաժին:

Ընկերությունը միջանկյալ շահաբաժիններ չի վճարել:

03.04.2009թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից որոշվել է Ընկերությանը պատկանող տարածքում իրականացնել շինարարական աշխատանքներ: Չնայած շինարարությունը իրենից ներկայացնում է լայնածավալ ներդրումային ծրագիր, այն չի կարող գերազանցել Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը և հանդիսանալ խոշոր գործարք:

**3) թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:**

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը:

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Ընթացիկ գործունեության ղեկավարում կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ԲԸԾ-ներում:
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ,	արտադրության գծով
Ջիվան Գյուլումյան	Գլխավոր ինժինիեր, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Սիլվա Խաչատրյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

«ԱՌԻԴԻՏ ՍՏԱՐ» ՍՊԸ



AUDIT STAR LTD.

ՀՀ, ք. Երևան,  
Բուսաբանական, 14  
Հեռ.՝ (374 10) 29 72 29  
(374 91) 42 33 13  
Ֆաքս (374 10) 29 72 30  
Էլ-փոստ [amelk@rambler.ru](mailto:amelk@rambler.ru)  
[hataz@rambler.ru](mailto:hataz@rambler.ru)

14 'Bussabanakan Str.,  
Yerevan, Armenia  
Tel.: (374 10) 29 72 29  
(374 91) 42 33 13  
fax (374 10) 29 72 30  
E-mail [amelk@rambler.ru](mailto:amelk@rambler.ru)  
[hataz@rambler.ru](mailto:hataz@rambler.ru)

## ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ

### Հարգելի բաժնետերեր

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ հաշվապահական հաշվեկշիռը առ 1-ը հունվարի 2009թ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:



Մենք չենք հետևել կազմակերպության 2008թ գույքագրման գործնթացին , քանի որ այն կատարվել է մինչև աուդիտի անցկացումը : Միարժամանակ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չէ 2008 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար մատակարարներից ստացված հումքի արժեքի և առաքված արտադրանքի գծով վերագնահատման արդյունքները:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, կազմակերպության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2009թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ՀՀ հաշվապահական ստանդարտների և ՀՀ օրենսդրության:



 Ա. Մելքոնյան

 Ղ. Մուշեղյան

Երևան Բուսարանական 14

« 17 » մարտի 2009թ.

Աուդիտորական գործունեության լիցենզիա 015 տրված  
27.12.2002թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
կողմից